Դ. ՏԱՐԻ Թիւ 940 — ՇԱԲԱԹ 21 ՓԵՏՐՈՒԱՐ 1887 (Ն. Տ.) 5 ՄԱՐՏ 1887 — 8 Ճէմազիւլ Ախըր 1304

20 ՓԱՐԱ (Ծ'ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ [illegible] ՕՐԱԳՐԻ
Կալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (Ծ'ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴ

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 21 ՓԵՏՐՈՒԱՐ, 1887

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԵԼԵՒՄՈՒՏՔ ԵՒ ԱՐՀԵՍՏՔ

[illegible]

Շաբթուս մեծ դէպքն ելմտական նախարարի փոփոխումն է։ Վսեմ. Ցակոբ փաշայի անուանումը բացառիկ կերպիւ մը ուշադրութիւն գրաւած էր, և անոր հրաժարումն ևս բացառիկ կարեւորութիւն մը ստացաւ բնականապէս։ Թէ իբրեւ Տէրութեան հաւատարիմ և անձնուէր պաշտօնեայ Ն. Վսեմութիւն միշտ կը վայելէ Վեհ. Ինքնակալին վստահութիւնն, յայտնի կ'երեւի Կայսերական Անձնական Գանձուն Նախարարութեան փափուկ և կարեւոր պաշտօնին մէջ յարատեւ պահպանումէն։ Բայց, ինչպէս սկիզբէն ևս ծանուցուեցաւ, Վսեմ. Ցակոբ փաշա ելմտական Նախարարութիւնն ընդունած էր ինչ ինչ բարեկարգական ծրագրեր ի գործ դնելու համար, և ինչպէս անցեալ օր Լէ-Ընտ Հէրըլտ կը նշանակէր քանի մը հակիրճ տողերով այլ և այլ նկատմամբք իւր դէմ ելած […]

[…]

ըստ որում Ցակոբ փաշայի մասին ծագած ինչ ինչ մասնաւոր կամ անձնական դժուարութիւնք կրնան դոյութիւն չունենալ Զիւհտի փաշայի մասին։

* * *

[…]

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ. Ալզաս-Լօռէնի Զէզոքացումը. Ֆրանքօ գերման անխուսափելի պատերազմի մը առաջքն առնլու համար, կը խորհուի Ալզաս-Լօռէնի գաւառներն ուրոյն եւ չէզոք Պետութիւն մ'ընել։ Եթէ Գերմանիոյ մէջ կան ծայրայեղ միտքեր, որք Ֆրանսան բնաջնջել կը խորհին, և եթէ Ֆրանսայի մէջ կան ծայրայեղ վրէժխնդիրներ, որք Գերմանիան ջախջախելով Ալզաս-Լօռէնն ետ առնուլ կը պատրաստուին, երկուց երկրաց մէջ ևս չափաւոր միտքեր սակայն կը դիտեն ֆրանքօ-գերման նոր պատերազմի մը պատճառելիք աննկարագրելի աղէտներն։ Ալզաս-Լօռէնն ուրոյն և չէզոք պետութիւն մ'ընելով, ո՛չ միայն Ֆրանսայի եւ Գերմանիոյ միջեւ պատերազմի միակ շարժառիթը կը վերնայ մէջ տեղէն, այլ նաեւ ապագային մէջ Ֆրանսա եւ Գերմանիա, իրարու սահմանակից լինելէ դադրելով, նոյնթապէս անկարող կը լինին իրարու հետ պատերազմելու։ Այս նոր Պետութեան անունը պիտի լինի եղեր ՀՌԵՆԻԱ, կամ Հռենեան Պետութիւն, (Ռէնանիա, Երկիր Հռենոս գետի,) որոյ հիւսիսային կողմը պիտի լինի Պելճիոյ և հարաւային կողմը Զուիցերլիոյ նմանապէս չէզոք և ուրոյն Պետութիւնք, որք վերէն ի վար չէզոք […]

—)( 48 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

## ԺԻՒԼ ՎԵՐՆ

### ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԻԿՈՎ

ԵՐԿՐԱԽՈՅԶԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ Յ'ԱՓՐԻԿԷ

ՊՍԱԿԵԱԼ Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԷՆ

ԳԼՈՒԽ ԹԸ.

—Մի՛ երկբայիր, սիրելի՛ Տիք, թէ շատ պիտի զարմանայ եւ իւր զարմանքը պիտի հրատարակէ խօշոր հատորներու մէջ։ Մեք ալ օր մը պիտի լսենք թէ հրաշալի ոսկեբեր գաւառներ կան Ափրիկէի աւազուտներուն մէջ։

—Եւ պատճառը ծոյլ պիտի լինի։»

Այսպէս ահա գիտնական մը խաբելու գաղափարը մխիթարեց բարի տղան եւ […]

[…]

